Ներուսաս սկսաւ յամի Տեառն ՆԲ։ Թագաւորեաց տարի մի և Դ. ամիս։ Սա՝ զոր ինչ Դիոմէտիանոս արարեալ էր և սահմանադրեալ, յետս ջրեաց զամենայն։ Ուստի և զսուրբ Աւետարանիչն Յովհաննէս դարձոյց յաքսորանացն Պատմոսի, և առաքեաց յԵփեսոս. ուր գրեաց զԱւետարանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Տրայիանոս սկսաւ յամի Տեառն ՆԳ. ինքնակալեալ ամս ԺԹ։ Սա 'ի հարձէ Սպանիացւոյ ծնեալ և յԻտալիայ իշխանացն Ադրիպեայ և Յելլոսի ինքնակալ եղեալ։ Սա զինի Օգոստոսի՝ զիշխանութիւնն Հռովմայ ածեցոյց մինչև 'ի Բաբելոն և 'ի Հնդիկս. և 'ի ծովն Պարսից նաւս եդ։ Սա մինչ դայր յԵգիպտոսէ յԱնտիոք, կալաւ զԻգնատիոս աստուածազգեացն՝ և երեր 'ի Հռոմ։ Եւ սուրբն միշտ յիշէր զանունն Քրիստոսի. և զենւորքն ասեն ցսուրբն. մինչև յե՞րբ յիշես զանունն Քրիստոսի. և նա ասէ, 'ի վերայ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան